«ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՐԴԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ

2023**թ.-ից (կրկնողաբար) ք. Երևան (ՀՀ ԱՆ ԱԱԻ)**

ՀՀ ԱՆ ԱԱԻ Հանրային առողջապահության կառավարման և կազմակերպման ամբիոն

- Թիրախային լսարան՝ ավագ բուժաշխատողներ
- Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 10-35 հոգի
- մասնակիցներին շնորհել ՇՄԶ 13 տեսական և 1 գործնական կրեդիտ
- Կոնտակտ 011300088

Շաբաթ 1	
Օր 1	
3 ժամ	**Դասախոսություն** «Առողջապահական իրավունք», հասկացությունը, դերը և տեղը ՀՀ իրավունքի համակարգում: Իրավական ակտեր, տեսակները, ստորադասությունը: Բժշկական օգնության և սպասարկման կազմակերպումը, իրականացումը կանոնակարգող իրավական ակտերը
Օր 2	
3 ժամ	**Դասախոսություն** Մարդու առողջության պահպանման իրավական հիմնախնդիրները: Պացիենտի (բուժառու) հասկացությունը բժշկական իրավունքում: Պացիենտի (բուժառու) հիմնական իրավունքները և պարտականությունները: Մարդու իրավունքները կենսաբժշկության հիմնահարցերի համատեքստում
Օր 3	
2 ժամ	**Դասախոսություն** Պացիենտների (բուժառու) տեղեկացված համաձայնության իրավական հիմքերը բժշկական միջամտությունների իրականացման գործընթացում: Պացիենտների (բուժառու) անձնական տվյալների, այդ թվում հատուկ կատեգորիայի անձնական տվյալների փոխանցման իրավաչափության պայմանները և սահմանները
1 ժամ	**Գործնական աշխատանք** Բժշկական միջամտության համար իրազեկված համաձայնության, հիվանդության պատմագրի, բժշկական միջամտությունից հրաժարվելու, բժշկական գաղտնիք համարվող տվյալների փախանցման վերաբերյալ պացիենտի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության ձևաթղթերի և իրավական այլ փաստաթղթերի լրացման առանձնահատկությունները

Օր 4	
3 ժամ	**Դասախոսություն** Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների, բուժաշխատողների իրավական կարգավիճակը: Բուժաշխատողները որպես աշխատանքային իրավահարաբերությունների սուբյեկտ
Օր 5	
2 ժամ	**Դասախոսություն** «Բժշկական սխալ» հասկացության իրավաբանական բովանդակությունը: Բուժաշխատողների մասնագիտական իրավախախտումները: Քրեական պատասխանատվությունը առողջապահության բնագավառում

Դասընթացավար՝ Ալիսա Կճանյան